

ԿԱՆԹԵՂ

ՄՈՆՏՐԵԱԼԻ ՍՈՒՐԵ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԵՍ
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

GANTEGH

BULLETIN DU DIMANCHE
DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE
ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL



GANTEGH


SUNDAY BULLETIN OF
ST. GREGORY THE ILLUMINATOR
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

WWW.SAINTGREGORY.CA

ԿԻՐԱԿԻ, 30 ՅՈՒԼԻՍ 2017

**Բ ԿԻՐԱԿԻ ԶԿՆԻ
ՎԱՐԴԱՎԱՐԻ / ԹԻԻ 17**

**SUNDAY, July 30, 2017
SECOND SUNDAY
OF VARTAVAR – N0/17**



TODAY'S BIBLE READINGS

1 Corinthians 1:25-30 | Matthew 18:10-14 |

Պատարագիչ՝

ԱՐԺ. Տ. ԵՂԻԱ Ա. ՔՀՆՅ. ՔԵՐՎԱՆՃԵԱՆ

Հոգեւոր Հովիւ

Celebrant:

REV. ARCH. FR. YEGHIA KERVANJYAN

Pastor

**Deacons: Dn. Minas Asaduryan, Dn. Arto Sivacyan, Dn. Vahan Shakaryan,
Dn. Raffi Arabian, Dn. Norayr Grigoryan**

Acolytes: Michael Arabian, Armen Bajakian, Shiraz Sivadjian

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
secretary@saintgregory.ca | www.saintgregory.ca

Choirmaster: Miss Lori Antounian
Organist: Mr. Karen Manucharyan

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

1 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ 1.25-30

25 որովհետև Աստուծոյ յիմարութիւնը մարդոցմէ աւելի իմաստուն է, եւ Աստուծոյ տկարութիւնը մարդոցմէ աւելի ուժեղ է: **26** Արդարեւ դուք կը տեսնէք ձեր կոչումը, եղբայրներ՝, թէ ի՛նչպէս ո՛չ թէ շատ իմաստուններ՝ մարմինի համեմատ, շատ զօրաւորներ, շատ ազնուականներ կանչուեցան, **27** հապա Աստուած ընտրեց աշխարհի յիմարները՝ որպէսզի ամօթահար ընէ իմաստունները: Աստուած ընտրեց աշխարհի տկարները՝ որպէսզի ամօթահար ընէ հզօրները. **28** Աստուած ընտրեց աշխարհի ստորինները, անարգուածներն ու բա՛ն մը չեղողները, որպէսզի ոչնչացնէ բա՛ն մը եղողները. **29** որպէսզի ո՛չ մէկ մարմին պարծենայ Աստուծոյ առջեւ: **30** Բայց դուք Քրիստոս Յիսուսով անկէ՛ք, որ Աստուծմէ մեզի համար իմաստութիւն, արդարութիւն, սրբութիւն եւ ազատագրութիւն եղաւ. **31** որպէսզի, ինչպէս գրուած է. «Ո՛վ որ պարծենայ, թող պարծենայ Տէրոջմո՛վ»:

ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԵՈՍԻ 18:10-14

10 «Ուշադի՛ր եղէք որ չարհամարիէք այս պզտիկներէն մէկը. քանի որ կ'ըսես՝ ձեզի թէ երկինքի մէջ անոնց հրեշտակները ամէն ատեն կը տեսնեն երեսը իմ Զօրս՝ որ երկինքն է: **11** Որովհետեւ մարդու Որդին եկաւ կորսուա՛ծը փրկելու: **12** Ի՞նչ է ձեր կարծիքը. եթէ մարդ մը ունենայ հարիւր ոչխար եւ անոնցմէ մէկը մոլորի, իննսունինը ոչխարները լեռները չի՞ թողուր ու՞ երթար՝ փնտռելու մոլորածը: **13** Եթէ պատահի որ գտնէ զայն, ճշմա՛րտապէս կը յայտարարեն՝ ձեզի թէ աւելի՛ կ'ուրախանայ

անոր համար, քան իննսուներեսին՝ որոնք մոլորած չէին: **14** Այսպէս՝ ձեր երկնաւոր Հայրը չի հաճիր որ այս պատիկներէն մէկը կորսուի»:

MATTHEW 18:10-14

10 Take heed that ye despise not one of these little ones; for I say unto you, That in heaven their angels do always behold the face of my Father which is in heaven.


11 For the Son of man is come to save that which was lost.

12 How think ye? if a man have an hundred sheep, and one of them be gone astray, doth he not leave the ninety and nine, and goeth into the mountains, and seeketh that which is gone astray? **13** And if so be that he find it, verily I say unto you, he rejoiceth more of that sheep, than of the ninety and nine which went not astray.

14 Even so it is not the will of your Father which is in heaven, that one of these little ones should perish.

1 Corinthians 1.25-30

25 Because the foolishness of God is wiser than men; and the weakness of God is stronger than men. **26** For ye see your calling, brethren, how that not many wise men after the flesh, not many mighty, not many noble, are called: **27** But God hath chosen the foolish things of the world to confound the wise; and God hath chosen the weak things of the world to confound the things which are mighty; **28** And base things of the world, and things which are despised, hath God chosen, yea, and things which are not, to bring to nought things that are: **29** That no flesh should glory in his presence. **30** But of him are ye in Christ Jesus, who of God is made unto us wisdom, and righteousness, and sanctification, and redemption:



ԿՈՐՍՈՒԱԾԸ

<<Մարդու Որդին եկաւ կորսուածը փրկելու համար>> (Մտ.18-11)

Քրիստոս յստակ բառերով կը շեշտէ, թէ <<եկաւ կորսուածը փրկելու համար>>: Եկէ՛ք միասնաբար փորձենք հասկնալու, թէ ինչ նպատակ կը հետապնդէին այդ խօսքերը, որո՞ւ ուղղուած էին, ի՞նչ էր Քրիստոսի նպատակը այն ժամանակ եւ այսօր ի՞նչ պատգամ կը փոխանցէ մեզի դարերու հոլովոյթին ընդմեջէն: Որքա՛ն ինքնատիպ ու եզակի է Քրիստոսի վարդապետութիւնը: Երբ քննենք Սուրբ Գիրքը, պիտի տեսնենք, որ Ան որքա՛ն պարզ ու յստակ կ'եցուածք ունի, որքա՛ն հիմնական ու ճշմարիտ հաստատումներ կ'ընէ:



Աստուած Իր Միածին Որդին ղրկեց աշխարհին, որպէսզի փրկէ կորսուածը: Եւ, ո՞վ է կորսուածը, եթէ ոչ մենք: Աստուած երբ ստեղծեց մարդը, տուաւ անոր ուղղութիւն մը եւ պահանջեց, որ այդ ուղղութեամբ ընթանայ ան: Սակայն, մարդուն համար աւելի հետաքրքրական ու առինքնող էր այլ զարտուղի ճամբաներ եւ միօրինակ թուեցաւ իրեն Աստուծոյ հաստատած ճամբան եւ մարդը շեղեցաւ իրմէ պահանջուած ուղղութենէն:

Արդեօք, այսօր մենք որքանո՞վ կը տարբերինք այն կորսուած մարդոցմէն, որոնց համար եկաւ Քրիստոս: Այսօր մենք եւս չե՞նք տարուիր հմայիչ ու գունազեղ նոր ու մոլորեցուցիչ ճամբաներով եւ կակնկալենք թէ այդ ճամբաները մեզ հասցնեն մեր նպատակին, առանց տեսնելու թէ ունինք անբաղդատելիօրէն գեղեցիկ ու յարդարուած ճամբայ մը, որ կ'առաջնորդէ դէպի Աղբիւրը: Մենք մեր ձեռքը ունինք ուղեցոյց մը, որ պատրաստուած է Արարչին կողմէ Կեանքի առաջնորդելու նպատակաւ. Սուրբ Գիրքն է այդ: Սակայն մենք մեր ազատ կամքով կ'ընտրենք այլ ուղեցոյցներ՝ յաճախ մեր ուղեցոյցները, որոնք երբե՛ք չեն առաջնորդեր մեզ դէպի Կեանքը՝ Քրիստոս: Քրիստոս այսօր ալ կը հրաւիրէ մեզ փրկութեան՝ Եկեղեցւոյ ճամբով:

Եւ ի՞նչ է փրկութիւնը:

Փրկութիւնը ընթացք մըն է, որ սկսած է Քրիստոսով եւ պիտի կատարելագործուի իր եկրորդ գալուստով: Փրկութեան ճանապարհին մե՛ջն ենք, սակայն մի՛շտ շեղելու հակումը ունինք, մեր մարդկային բնութիւնը

յաճախ կը տանի մեզ ճամբէն դու՛րս. Սակայն եթէ Զրիստոսով կը քալենք անկարելի է, որ մէկը մեզ գայթակղեցնէ: Եթէ Զրիստոս արթուն է մեր նաւակին մէջ ու նաեւ մեր ուղեցոյցը, անկարելի է, որ կորսուինք ովկիանոսի մէջ իսկ: Կրնան մեր ճամբաները ալեկոծ, փշոտ, ցեխոտ եւ կամ տղմոտ ըլլալ, մեր հաւա՛տքը պիտի ըլլայ մեր գրահը:

Այսօր, կրկին հրաւեր կը ստանանք խոկալու եւ քայլ մը եւս մօտենալու, ուղղելու մեր դէկը դէպի ճշմարիտ ճանապարհը, որ կ'արաջնորդէ մեզ աղբիւրին: Տանուտերը այսօր պնդելով կը հրաւիրէ մեզ մասնակից դառնալու իր խնճոյքին:

Եկէ՛ք չզրկենք մենք զմեզ: Սա բաց հրաւեր է մեր ամենուն: Մասնակից Տիրոջ ուրախութեան եւ մեզի համար պատրաստուած բաժինը ստանանք իրմէ. ճաշակենք ճշմարիտ հացը եւ ըմպենք ճշմարիտ ըմպելին: Ականջ տանք ու ձայնակցինք սաղմոսերգուին որ կ'ըսէ. «Ճաշակեցէք եւ տեսէք զի՛ քաղցր է Տէր»> (Սղմ.34-8), եւ այդ քաղցրութիւնը կ'արաջնորդէ մեզ դէպի ճշմարիտ ճամբան, դէպի փրկութեան օթեւանը, դէպի անվախճան կեանքը, իր անանց քաղցրութեամբ, յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Տ. Եղիա Ա. Քինյ. Քերվանճեան

Isaiah 14:12 – 17
Ezekiel 28:12 – 19

“...whose minds the god of this age has blinded, who do not believe, lest the light of the gospel of the glory of Christ, who is the image of God, should shine on them.”
- 2 Corinthians 4:4

Scripture Reading

Key Verse

ԻՅՏՉԻՍՑ
ՉՎԻԴԻՍ

ՎԵՐՉԵ
ԿՅՆ

Տօն Ս. Թաղէնու Առաքեալի եւ Ս. Սանդուխտ Կոյսի

Այսօր Ս. Թաղէնու առաքեալի եւ Ս. Սանդուխտ կոյսի յիշատակութեան օրն է: Թաղէնու առաքեալը Քրիստոսի տասներկու աշակերտներէն է: Ս. Բարդուղիմէնու առաքեալի հետ կը համարուի Հայոց առաջին լուսաւորիչը: Աւետարանին մէջ կը յիշուի մի քանի անուններով՝ Թաղէնու (Մարկոս 3.18), Ղեբէնու (Մատթէոս 10.3) եւ Յուդա (Ղուկաս 6.16, Գործք Առաքելոց 1.13): Հերոնիմոսը Թաղէնոսին կը կոչէ Եռանուանի (Trinomius), որ կը նշանակէ երեք անուններ ունեցող մարդ: Քրիստոնէութիւնը քարոզելու նպատակով Ս. Թաղէնոսը նախ գնաց Եդեսիա քաղաք, ուր կ'իշխէր Աբգար թագաւորը: Վերջինս հիւանդ էր եւ լսեր էր Պաղեստինի մէջ Յիսուսի կատարած բժշկութիւններու մասին: Աբգարը, չկարողանալով անձամբ Երուսաղէմ երթալ, նամակով եւ պատուիրակութեամբ Յիսուսին Եդեսիա հրաւիրեց, որպէսզի գայ եւ իրեն բժշկէ: Այդ ժամանակ Յիսուս կը քարոզէր Հրեաստանի մէջ: Ուստի խոստացաւ Եդեսիա ուղարկել իր առաքեալներէն, որպէսզի բժշկեն անոր: Եւ իրօք, Յիսուսի համբարձումէն յետոյ այդ խոստումը կատարուեցաւ: Աբգար թագաւորը հաւատաց Տիրոջը եւ հրաշքով բժշկուեցաւ Թաղէնու առաքեալի կողմէ: Ս. Թաղէնոսը քրիստոնէութիւնը քարոզեց ոչ միայն արքունիքին մէջ, այլ նաեւ՝ ժողովուրդին մէջ: Ճատերը հաւատացին Քրիստոսին եւ մկրտուեցան: Առաքեալը, Եդեսիոյ մէջ քարոզչութիւնը աւարտելով, անցաւ Հայաստան: Հայաստանի մէջ ամենուրեք կը տիրէր կռապաշտութիւնը: Առաքեալը շրջեցաւ զանազան քաղաքներ եւ քարոզեց քրիստոնէութիւնը: Սուրբ Թաղէնու առաքեալի քարոզչութեամբ գաղտնի քրիստոնեայ կը դառնայ հայոց Սանատրուկ արքայի միակ դուստրը՝ տասնհինգամեայ Սանդուխտը: Հայրը աղջկան կռապաշտութեան վերադարձնելու համար տարբեր միջոցներ կը գործադրէ: Սակայն, տեսնելով, որ իր ջանքերն ապարդիւն են, կը զայրանայ եւ սպաննել կու տայ թէ՛ Սանդուխտ կոյսին եւ թէ՛ Թաղէնու առաքեալին: Սուրբ Սանդուխտ կոյսը հայ եկեղեցւոյ առաջին նահատակ կոյսն է: Ըստ ազգային ավանդութեան, Թաղէնու առաքեալը իրեն հետ Հայաստան կը բերէ սուրբ Գեղարդը (նիզակ, տեգ), որով զինուորը խաչին վրայ խոցեց Յիսուսի կողմ



(Յովհաննես 19.34), ինչպես նաև՝ բաժին մը այն իւղէն, որ Յիսուս փոխանցած էր առաքելներուն: Այդ պատճառով այժմ միւռնօրհնութեան ժամանակ հին Միւռնէն որոշ մաս մը կը խառնեն նորին, իսկ Թադէոս առաքելը միշտ պատկերգարդուած է սուրբ Գեղարդը ձեռքին: Այդ սրբութիւնը մինչ օրս պահուած է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի մէջ:

Սուրբ Թադէոս առաքելի գերեզմանը Արտագ գաւառին մէջ է (Ներկայիս Իրանի Ատրպատական գաւառի արեւմտեան կողմը): Յետագային անոր գերեզմանին վրայ կառուցուեցաւ Սուրբ Թադէի վանքը (Ճնորհիք արքեպիսկոպոս Գալուստեան, «Աստուածաշնչական սուրբեր»):

Սուրբ Սանդուխտ կոյսի գերեզմանը երկար ժամանակ անյայտ էր: Տարիներ ետք Կիրակոս անունով միայնակեացիի մը տեսիլքով կը յայտնուի գերեզմանին տեղը (Տ. Թորգոմ պատրիարք, «Սուրբք եւ Տօնք Հայաստանեայց եկեղեցոյ»): Ըստ վկայութեան Օրմանեանի, Ս. Սանդուխտ կոյսի գերեզմանը կը գտնուի Նարեկայ վանքին մէջ, որուն բուն անունն է Ս. Սանդուխտի վանք: Օրմանեանը կ'աւելցնէ նաև, որ Սանդուխտ կոյսի յիշատակը, ըստ նախնական տօնացոյցերուն, առանձինը կը կատարուէր, յետոյ սակայն Թադէոս առաքելի տօնին հետ միացուեցաւ:

Հայաստանի մէջ քրիստոնէթեան առաջին քարոզիչները եւ տարածողները եղան Ս. Թադէոս եւ Ս. Բարդուղիմէոս առաքելները: Անոնց քարոզչութիւններու եւ նահատակութիւններուն համար ալ Հայ եկեղեցին կը համարուի Առաքելական եւ կ'անուանուի Հայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցի:

Հայոց եկեղեցին Ս. Թադէոս առաքելին կը յիշատակէ տարին երեք անգամ, մէկը՝ տասներկու առաքելներու շարքին, միւսը՝ Սանդուխտ կոյսին հետ նել երրորդը՝ Բարդուղիմէոս առաքելին հետ:



ՎԱՐՂԱՎԱՌԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԼՈՐԻՉ ԱՌԱՋ ՆՈՐՂԱՆԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ

Կիրակի, 23 Յուլիս 2017-ին, առաւօտեան ժամը 10:30-ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ մէջ, Ս. Պատարագ մատուցեց Եկեղեցւոյ Յովիւ՝ Արժ. Տ. Եղիա Ա. Քհնյ. Քերվանճեան, Ս. Պատարագին ներկայ կը գտնուէր նաեւ՝ Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Պոյաճեան: Ս. Սեղանին սպասարկեցին Բրշ. Սարկաւազները, իսկ Պատարագի երգեցողութիւնը կատարեց՝ «Կոմիտաս» Դպրաց Դասը, ղեկավարութեամբ՝ Լօռի Անթունեանի, երգեհոնի ընկերակցութեամբ՝ Կարէն Մանուչարեանի:



Ապա, Արժ. Տ. Եղիա Ա. Քհնյ. Քերվանճեան իր քարոզով անդրադարձաւ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Պայծառակերպութեան եւ Այլակերպութեան, որ ամէն տարի կը նշենք Եկեղեցւոյ տաղաւար տօներէն՝ Վարդավառի տօնին: Քրիստոսի այլակերպումը կ'արտայայտէ Աստուծոյ ներկայութիւնը, զօրութիւնն ու ներգործութիւնը: Մենք կ'ապրինք այդ զօրութեան շնորհիւ, որուն միջոցաւ կը պայծառացնենք նաեւ՝ մեր առօրեայ ծանրաբեռնուած կեանքը: Արժ. Տեր Յայրը շնորհաւորեց բոլոր Վարդավառ, Վարդգէս, Վարդերես, Վարդուհի, Վարդենի, Վարդանուշ, Վարթիթեռ, Վարվարէ, Վարդ, Ալվարդ, Լուսավարդ, Նուարդ, Պայծառ, Ռոզա եւ Պատրիկ անունները կրողներուն անուանակոչութիւնը եւ օրինեց բոլոր հաւատացեալներն ու Վարդավառի տօնին ականդութեան համաձայն ջուր սրսկելով անոնց վրայ:

Յաւարտ Ս. Պատարագի, Եկեղեցւոյ պարտեզին մէջ տեղի ունեցաւ Վարդավառի տօնին նուիրուած խորոված – ճաշկերոյթ, կազմակերպութեամբ՝ Ծխական Խորհուրդին: Շնորհիւ խումբ մը կամաւոր հաւատացեալներու





պատրաստակամ եւ ժրաջան
աշխատանքին, ճաշկերոյթը ընթացաւ
հաճելի եւ շինիչ մթնոլորտի մէջ:

Մեր սրտագին շնորհակալութիւնը բոլոր
անոնց որոնք նպաստեցին օրուան
ձեռնարկի յաջողութեան:

Հովիւ եւ Ծխական Խորհուրդ

Celebration of the feast of Vartavar

At

St. Gregory the Illuminator Cathedral, Montreal

At 10:30 a.m., Sunday July 23rd 2017, the Divine Liturgy was celebrated by Rev.Fr. Yeghia Kervandjian, pastor of the St Gregory the Illuminator Cathedral. Rev.Fr. Vazken Boyadjian also attended the Divine Liturgy.

At the sacred table, Rev.Fr.Yeghia was served by the deacons and the chantership was carried out by the Gomidas Choir under the leadership of Lori Altounian, accompanied on the organ by Garen Manoutcharian

In his sermon, Rev. Fr. Yeghia made reference to the Transfiguration of our Lord Jesus Christ that we refer every year as one of the main feasts of the church. This Transfiguration of God in all its vivacity, splendor and brilliancy explains the presence of God, His power and His work in our inner self. The presence of God in us illuminates our inner selves during our heavily loaded daily activities. Subsequently, Rev. Arch. Fr. Yeghia congratulated and blessed all the Vartavar, Vartkes, Varteres, Vartouhie, Varteni, Vartanoush, Vartiter, Varvare, Vart, Alvart, Lousavart, Sirvart, Nevart, Baytzar, Rosa and Badrig name carriers on their name day and according to the tradition during the feast of Vartavar sprinkled water on the parishioners.



The Divine Liturgy was followed by a delicious BBQ on the greens in front of the church. It was served by a group from the parish council and church volunteers, whose efforts were

recompensed by a successful lunch in a pleasant atmosphere. All present enjoyed the company.

Our heartfelt thanks to all those who contributed for the success of this day.



Pastor and Parish Council





ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

Ս. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ
Յովին ու Ծխական Խորհուրդը

ՄԱՐԳ ԽԵՉՈՒՄՈՎԻ

Սկրտութեան օրհնաբեր եւ ուրախ առիթով
իրենց խորին շնորհաւորանքը կը յղեն մկրտեալի ծնողներուն
եւ բոլոր հարազատներուն, աղօթելով առ Աստուած,
որ փոքրիկն **ՄԱՐԳԸ**

Ս. Սկրտութեան աւագանէն իր վերստին ծնունդով արժանանայ
Աստուածային Օրհնութեան
իւր կեանքի ամբողջ տեւողութեան:



CONGRATUALIONS ON THE BAPTISMAL CEREMONY

The Pastor & the Parish Council
of St-Gregory the Illuminator Armenian Cathedral
On the Baptismal ceremony
of the child

MARC KHECHUMOV

Extend their heartfelt congratulations

to the child parents & family.



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ

Յովիւն ու Ծիական Խորհուրդը

ՆԱՐԵԿ ՄԸԿԸՐՏԻՔԵԱՆԻ

Մկրտութեան օրհնաբեր եւ ուրախ առիթով
հրեւց խորին շնորհաւորանքը կը յղեն մկրտեալի ծնողներուն
եւ բոլոր հարազատներուն, աղօթելով առ Աստուած,

որ փոքրիկն **ՆԱՐԵԿ**

Ս. Մկրտութեան աւագանէն իր վերստին ծնունդով արժանանայ
Աստուածային Օրհնութեան
իւր կեանքի ամբողջ տեւողութեան:



**CONGRATUALTIONS ON THE
BAPTISMAL CEREMONY**

The Pastor & the Parish Council
of St-Gregory the Illuminator Armenian Cathedral
On the Baptismal ceremony
of the child

NAREG MEQERDIKIAN

Extend their heartfelt congratulations
to the child parents & family.





**Ուշադրութիւն մեր սիրելի հաւատացեալներուն,
Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն,
հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ
քարտուղարութեան (514) 279-3066, մեր
հաղորդակցութիւնները կարենալ պահելու համար
կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ:
Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:**

Հովիւ եւ Ծխական Խորհուրդ



**Attention to our beloved parishioners,
If you have changes in your address, e-mail or phone numbers
please feel free to convey your new data to the Church office at
(514) 279-3066, to maintain our communication in a regular,
continuous, and up-to-date course.
Thank you for your cooperation.**

Pastor and Parish Council

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE
REPOSE OF SOUL

ԿԻՐԱԿԻ, 30 Յուլիս 2017

Տիկ. Ասթրի Մուրատեանի,
Տիար Ստեփան Մուրատեանի,
Տ. եւ Տիկ. Ֆրանսուա Ռաշայի եւ Թամար Մուրատեանի
եւ զաւակներուն,

Տիար Մայք Մուրատեանի,
Տ. եւ Տիկ. Յակոբ եւ Միշէլ Մուրատեանի,
Տիար Լեւոն Մուրատեանի,

Տ. եւ Տիկ. Արթո եւ Անի Մուրատեանի եւ զաւակներուն,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի իրենց սիրեցեալ
ամուսնոյն, հօր, եղբօր, հօրեղբօր եւ մեծ հօր՝

ՊԵՐՃ ՄՈՒՐԱՏԱՆԻ
(BERDGE MOURADIAN)

(Մահացած Թօրոնթօ)
Մահուան 40-ին առիթով



Տ. եւ Տիկ. Ռուսի եւ Լիտիա Գօշերի եւ զաւակին՝ Մարգի,
Տ. եւ Տիկ. Միհրան եւ Գլօտ Չիչէքի եւ զաւակին՝ Փօլի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ մօր եւ մեծ մօր՝

ԱՆՈՒՇ ԱԾԵՍԵԱՆ ՉԻՉԷՔԻ
(ANOUSH ADJEMIAN CICEK)

ԵՒ

ՍՈՒԼԱ ԷՐԹԻՒՐՐԻՒՐԻ
(SOULA ERTURUR)

Յոգիներուն ի հանգիստ

ԵՒ

Իրենց սիրեցեալ իօր եւ մեծ իօր՝

ՎԱՅԷ ՉԻՉԷՔԻ

(VAHE CICEK)

Յոզուէն ի հանգիստ

Ինչպէս նաեւ՝

ՉԻՉԷՔ, ԱՃԵՄԵԱՆ ԵՒ ՄՕՐԻՍԷԹ

Գերդաստաններու համայն ննջեցելոց
հոգիներուն ի հանգիստց



Տիար Շահէն Մեսրոպեանի եւ զաւկին՝

Վանեսա Մեսրոպեանի եւ ընտանիքին,

Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի

իրենց սիրեցեալ մօր եւ մեծ մօր՝

ԼԻԻՍԻ

ՄԱՏԱԹԵԱՆ ՄԵՍՐՈՊԵԱՆԻ

(LUCIE MADATIAN MESROBIAN)

Մահուան առաջին տարելիցին առիթով



Now we find that the Law keeps slipping into the picture to point the vast extent of sin. Yet, though sin is shown to be wide and deep, thank God his grace is wider and deeper still!

Romans 5:20, Phillips

Lord our God, we come into your presence, pleading with you to bring the world what it needs, so that people may be freed from all their pain and enabled to serve you. Let the power of Jesus Christ be revealed in our time. For he has taken on our sin that justice might arise on earth, that all might have life and might see your salvation, which you will bring when the time is fulfilled. Let your power be revealed in the world, and let your will be done, your name be kept holy, and all wrongs be righted in this turbulent and difficult age. O Lord our God, you alone can help. You alone are the Savior of all peoples. In your great mercy you can bring peace. We look to you. And when we consider your Word, we remember the mighty promises you have given, promises which are to be fulfilled in our time. Amen.



ՑԱԻԱԿՑԱԳԻՐ

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ

Հոգեւոր Հովիւն ու Ծխական Խորհուրդը

Ողբացեալ

ԵՂԻՍԱԲԷԹ ՕԶՕՂՆՈՒԻՆ

Մահուան տխուր առիթով

իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի

բոլոր պարագաներուն, աղօթելով առ Աստուած,

որ անոր հոգին Երկնային Արքայութեան արժանանայ:



The Pastor & the Parish Council

of St-Gregory the Illuminator Armenian Cathedral

In memory of the late

YEGHISAPET OZOGLU

extend their condolences to all the family members

Praying for her soul to rest in peace.





ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Մեր խորագգաց շնորհակալութիւնը կը յայտնենք
Գանատահայոց Թեմի Առաջնորդ՝
ԳԵՐՇ. Տ. ԱԲԳԱՐ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻՆ
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ Հովիւ՝
ԱՐԺ. Տ. ԵՂԻԱ Ա. ԲՅՆՅ. ԶԵՐՎԱՆՃԵԱՆԻՆ
ԵՒ

ԱՐԺ. Տ. ՎԱԶԳԵՆ ԲՅՆՅ. ՊՈՅԱՃԵԱՆԻՆ

Ծխական Խորհուրդին, «Կոմիտաս» Դպրաց Դասին, Տիկնանց
Յանձնախումբին, Պոլսահայ Մշակութային Միութեան Վարչութեան եւ բոլոր
անոնց, որոնք իրենց նուիրատուութեամբ, բացիկներով, ծաղկեփունջերով,
հեռաձայնային եւ այլ դրութեամբ ցաւակից եղան մեր սիրեցեալ մօր՝

ԵՂԻՍԱԲԷԹ ՕԶՕՂՆՈՒԻ

մահուան տխուր առթիւ

ՎՇՏԱՀԱՐ ՁԱԻԱԿՆԵՐԸ՝

ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՏԻԳՐԱՆ ԵՒ ՌԻՄԱ ՏԷՐՏԷՐԵԱՆ ԵՒ ՁԱԻԱԿՈՒՆՔ

ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՂԱԶԱՐ ԵՒ ՅԱՍՄԻԿ ՄԷԹ ԵՒ ՁԱԻԱԿՈՒՆՔ





Եկեղեցւոյ Տաղաւար Տօներ եւ Յառաջիկայ Ձեռնարկներ

Վերափոխումն Ա. Աստուածածնի –

Խաղողօրհներ – Կիրակի, 13 Օգոստոս 2017

Խաչվերաց – Կիրակի, 17 Սեպտեմբեր 2017

Տարեկան Պազար – Շաբաթ եւ Կիրակի – Հոկտեմբեր 28 եւ 29, 2017

Սանուկներու Ա. Ծնունդ / CFFA – Կիրակի, 3 Դեկտեմբեր 2017

Եկեղեցւոյ Գնման եւ Օծման 47-րդ Տարեդարձ –

Կիրակի, 10 Դեկտեմբեր 2017

FEAST DAYS AND UPCOMING EVENTS

Feast of the Assumption of the Holy Mother of God -

Sunday, August 13th, 2017

Feast of the Exaltation of the Holy Cross –

Sunday, Sept. 17th, 2017

Annual Bazaar – Saturday & Sunday-

October 28 & 29, 2017

Children's Christmas /CFFA –

Sunday, December 3rd, 2017

Church 47th Anniversary –

Sunday, December 10th, 2017

ՆՈՒԻՐԱՏՈՒՆԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

DON
À L'ÉGLISE



DONATION
FOR THE CHURCH

Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal

Donations of July 2017

have been received with great appreciation

Dr. & Mrs. Baghdig Agopyan \$100.

VARTAVAR:

Mr. Aram Minasyan \$50.

ASDVATZATZIN:

Mr. & Mrs. Kevork & Maral Partamian \$50.

HOKEHANKISD MERELOTZ VARTAVAR:

THE LATE GOULD FAMILY

Mrs. Arpi Gould \$250.

***IN LIEU OF FLOWERS, THE FOLLOWING
DONATIONS WERE RECEIVED FOR:***

THE LATE YEGHISAPET OZOGLU

*Mr. & Mrs. Jean & Dirouhi Dertadian \$100, Mr. & Mrs. Vahe & Ani Karali
(U.S.A.)\$60, Mrs. Emma Kaloustian \$50.*





SOL



**ՎԵՐԱՓՈՒՆՈՒՄ Ա. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ
ԵՒ ԽԱՂՈՂՈՐՀՆԷՔ**

**FEAST OF ASSUMPTION OF THE HOLY VIRGIN MARY
& GRAPE BLESSING**

**ՈՒՆՏԻ Ա. ՊԱՏԱՐԱԳ
DIVINE LITURGY**

Կիրակի, 13 Օգոստոս 2017, ժամը 10:30-ին / Sunday,
August 13, 2017 at 10:30 am

Պատարագիչ՝

ԱՐԺ. Տ. ԵՂԻԱ Ա. ՔՀՆՅ. ՔԵՐՎԱՆՃԵԱՆ
Հոգևոր Հովի

Celebrant:

REV. ARCH. FR. YEGHIA KERVANJYAN

Pastor

**Ա. Սեդանին պիտի սպասարկեն Բրշ. Սարկալազները:
Պատարագի երգեցողությունը պիտի կատարե
«Կոմիտաս» Դպրաց Դասը:**

**Ղեկավար՝ Լորի Անթունյան / Choirmaster: Lori Antounian
Երգեհոնահար՝ Կարեն Մանուչարյան / Organist: Karen
Manucharyan**

**Յաւարտ Ա. Պատարագի Ծխական Խորհուրդի
Նախաձեռնութեամբ տեղի պիտի ունենայ խորովածի
սպասարկութիւն եւ Տիկնանց Յանձնախումբի
կազմակերպութեամբ «Անուշեղէնի Վաճառք»
Եկեղեցւոյ շրջափակին մէջ:**

• **After the Divine Liturgy BBQ will be held in the church front
garden, organized by Parish Council &**

• **Bake Sale by Ladies Auxiliary.**

Մուտքի Նուէր՝ \$20 / Entrance Fee \$20



ԴՊՐԱՅ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ

Հոգեւոր Հովիւն ու Դպրաց Դասի Վարչութիւնը

Կը յայտնեն թէ պիտի սկսին դպրաց պատրաստութեան
Հանդիպումները

Այն պատանիներն ու երիտասարդները,
որոնք կը փափաքին ծառայել
Հայց. Առաք. Եկեղեցւոյ Սուրբ Խորանին եւ մաս կազմել
Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցւոյ Դպրաց Դասին կը
խնդրենք

հեռաձայնել՝ Եկեղեցւոյ Հովիւին (514) 241 -9347

Կամ Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514)279-3066:

Հոգեւոր Հովիւ

Տէր Եղիա Ա Քինյ. Քերվանճեան

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008

Rev, Arch. Fr. Yeghia Kervanjan: (514) 241-9347

E-Mail: secretary@saintgregory.ca, www.saintgregory.ca

Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Եկեղեցի



ԽՈԿՈՒՄ ԵՒ ՍՈՒՐԲ ԳՐԶԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Սիրելի հաւատացեալներ, ԽՈԿՄԱՆ, ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ԵՒ
ՍՈՒՐԲ ԳՐԶԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆԸ արդէն իսկ տեղի
կ'ունենան ամէն Հինգշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին,
Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ
Եկեղեցւոյ մէջ:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալները մասնակցելու այս
հոգեպարար արարողութեան եւ սերտողութեան, որուն
ընթացքին միասնաբար պիտի փորձենք ճանչնալ Սուրբ
Գիրքը, Եկեղեցւոյ հաւատքն ու առաքելութիւնը, մեր դերն
ու մասնակցութիւնը եկեղեցւոյ կեանքին մէջ եւ
վերջապէս պատասխան գտնել մեզ յուզող
հարցումներուն ու մտահոգութիւններուն:

Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին ներկայութիւնը:

Աղօթարար՝

Տ. Եղիա Ա Քինյ. Քերվանճեան


615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066
Rev. Arch. Fr. Yeghia Kervanjyan: (514) 241-9347

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՐԻ

Միբելի Հասարակական, Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզ, որ յետայսու, ամէն Կիրակի, Ձեր ինքնաշարժները կրնաք կանգնեցնել Bernard փողոցին վրայ գտնուող Ecole Outremont-ի parking-ին մէջ, սկսեալ առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ կ.ե. ժամը 3:00:

CAR'S PARKING

Dear Parishioners, We would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the Ecole Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm.



- From our Church turn right on Bernard street, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. Go all the way to the "centre d'éducation". The parking space is on your right.